

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«28» օգոստոս 2020թ.

No 2937 - Լ

«ԴԻԱՍԵՊՏԻԿ 70» ՄԱՇԿԱՅԻՆ ՀԱԿԱՆԵՒԻՉ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Դիասեպտիկ 70» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020թ. օգոստոսի 28-ի
2937 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

«ԴԻԱՍԵՊՏԻԿ 70» ՄԱՇԿԱՅԻՆ ՀԱԿԱՆԵԽԻՉ ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ

ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Դիասեպտիկ-70» մաշկային հականեխիչ ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկի տեսքով, սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով կիրառման համար պատրաստ լուծույթ: Որպես ազդող նյութեր՝ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ՝ 70,0%, ունդեցիլ ամիդոպրոպիլ տրիմոնիում մետոսուլֆատ՝ 0,23%, 2-ֆենօքսիլէթանոլ՝ 0,30%, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ՝ 0,10%, ինչպես նաև մաքրված ջուր և ֆունկցիոնալ բաղադրիչներ, այդ թվում մաշկը խոնավացնող և փափկացնող:

2. Միջոցի պիտանելիության ժամկետը արտադրողի չբացված բնօրինակ փաթեթավորմամբ՝ 5 տարի է: Միջոցը թողարկվում է 0,03-ից մինչև 2 դմ³ տարողությամբ պոլիմերային առանց պրոպելենտի սրվակներով, հագեցած դոզավորող, այդ թվում փրփուրառաջացնող կամ ցողացրող գլխադիրներով, պտուտակավոր կափարիչներով, 1-ից մինչև 50 դմ³ տարողությամբ սրվակներով և կանիստրներով, 50-ից մինչև 200 դմ³ տարողությամբ պոլիմերային տակառներով կամ սպառողի համար ընդունելի և արտադրանքի անվնասությունն ապահովող ցանկացած այլ տարայով: Միջոցը բնօրինակ փաթեթավորմամբ կարող է օգտագործվել պատի և հատակի ձեռքերի դեզինֆեկտորների մեջ, այդ թվում սենսոր և փրփուրառաջացնող՝ պահպանելով միջոցի ծախսի վերաբերյալ առաջարկները:

3. Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչը՝ թեստավորված

M.terrae-ի վրա, բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների (ԲՄՊՎ) հարուցիչները՝ թեստավորված P.aeruginosa-ի վրա), վիրուսների՝ ընդերային և արտաընդերային Ա, Բ, Յ, Դ հեպատիտների, ՄԻԱՎ հարուցիչների, ցիտոմեգալովիրուսի, հերպեսի վիրուսների, գրիպի վիրուսների (այդ թվում «թռչնի», «խոզի»), պարազրիպի, ադենովիրուսների, ռոտավիրուսների, նորովիրուսների, էնտերովիրուսային վարակների՝ պոլիոմիելիտի, Կոքսակի, ECHO, կորոնավիրուսների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS) վիրուսների, ՍՇՎՀ հարուցիչների, Կանդիդա ցեղի սնկերի, դերմատոֆիտների, բորբոսասնկերի նկատմամբ:

4. Միջոցն օժտված է ճարպագերծող և դեզոդորացնող հատկություններով, երկարացված 3 ժամ տևողությամբ հակամանրէային ազդեցությամբ:

5. Միջոցը, ըստ սուր թունավորության չափանիշների, ստամոքս ներմուծելիս և մաշկի վրա լցվելիս, ըստ ԳՈՍՍ 12.1.007-76, պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին, որովայնամզի վրա ազդելիս՝ պատկանում է քիչ թունավոր նյութերի 4-րդ դասին՝ ըստ Կ. Կ. Սիդորովի դասակարգման, չի ցուցաբերում գրգռող ազդեցություն չվնասված մաշկի վրա և առաջացնում է աչքերի լորձաթաղանթի գրգռում, ներշնչական (ինհալացիոն) վտանգավորության աստիճանով միջոցը պատկանում է քիչվտանգավոր նյութերի 4-րդ դասին, կիրառման առաջարկվող ռեժիմներով օժտված չէ մաշկային-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցությամբ: Աշխատանքային գոտու օդում սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) իզոպրոպիլ սպիրտի համար՝ 10 մգ/մ³ է (գոլորշիներ), չորրորդային ամոնիումային միացությունների (ՉԱՄ) համար՝ 1 մգ/մ³, 2-ֆենօքսիէթանոլի համար՝ 2 մգ/մ³:

6. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում¹ (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն), տարբեր

¹ Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ ցանկացած ուղղվածության (այդ թվում մանկաբարձ-գինեկոլոգիական, ատամնաբուժական, վիրաբուժական, մաշկա-վեներաբանական, մանկաբուժական, բուժակ-մանկաբարձական): հիվանդանոցներ (այդ թվում մանկական, մասնագիտացված և շտապ բժշկական օգնության, ուռուցքաբանական կենտրոններ և բաժանմունքներ), օրգանների փոխապատվաստման կենտրոններ, հեմոդիալիզի բաժանմունքներ, ծննդատներ (այդ թվում նեոնատոլոգիայի և արտամարմնային բեղմնավորման բաժանմունքներ, մանկական բաժանմունքներ), հոսպիտալ, բուժսանմաս, բուժքույրական խնամքի տներ, բժշկա-սոցիալական հաստատություններ (հոսպիտալ, պալիատիվ բժշկության բաժանմունքներ և հաստատություններ, բորոտանոց, դիսպանսերներ (այդ թվում մաշկա-վեներաբանական և հակատուբերկուլոզային), ամբուլատորիա, պոլիկլինիկա, այդ թվում մանկական, կանանց կոնսուլտացիա, մանկան տներ, կաթնախոհանոցմասնագիտացված (պրոֆիլային) և մանկական կենտրոններ (այդ թվում օժանդակ վերարտադրողական տեխնոլոգիաների, խորհրդատվական-ախտորոշիչ, պերինատալ), բժշկական կազմակերպություններ՝ շտապ բուժօգնության և արյան փոխներարկման (շտապօգնության, արյան փոխներարկման կայան, արյան կենտրոններ), առողջարան-կուրորտային կազմակերպություններ (բուժական, կուրորտային պոլիկլինիկականներ, առողջարաններ, այդ թվում մանկական, առողջարան-պրոֆիլակտորիա, առողջարանային և

ուղղվածության հիմնարկներում և հաստատություններում², այդ թվում կենցաղում, որպես մաշկային հականեխիչ:

1) Բուժանձնակազմի, պացիենտների և կազմակերպությունների ու տարբեր ուղղվածության հաստատությունների^{1,2} աշխատողների, 10 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակ բնակչության կենցաղում ձեռքերի հիգիենիկ մշակման համար: Ձեռքերի հիգիենիկ մշակումն իրականացնում են պացիենտի հետ անմիջական շփման ժամանակ, այդ թվում նրա խնամքի հետ կապված տարբեր գործողությունների իրականացումից առաջ, պացիենտի չվնասված մաշկի, օրգանիզմի կենսաբանական հեղուկների և արտադրությունների, լորձաթաղանթների, վիրակապերի հետ շփումից հետո, պացիենտի անմիջական հարևանությամբ գտնվող բժշկական սարքավորումների և այլ օբյեկտների հետ շփումից հետո, թարախային բորբոքային պրոցեսներով պացիենտների բուժումից հետո, աղտոտված մակերեսների և սարքավորումների հետ յուրաքանչյուր շփումից հետո, բժշկական ձեռնոց հագնելուց առաջ և դրանք հանելուց հետո, թույլ իմունիտետ ունեցող պացիենտին խնամելուց առաջ կամ հիվանդասենյակներում համայցներ իրականացնելու ժամանակ (երբ յուրաքանչյուր

առողջարարական ճամբարներ), հատուկ տեսակի բժշկական կազմակերպություններ (այդ թվում սղետների բժշկության, ոզմա-բժշկական փորձաքննության, դատա-բժշկական փորձաքննության, բժշկա-սոցիալական փորձաքննության, ախտաբանաանատոմիական (դիախերձարան) փորձաքննության կենտրոններ, սանիտարական տրանսպորտ, կլինիկական-ախտորոշիչ, միկրոկենսաբանական, մանրէաբանական (այդ թվում տուբերկուլոզի ախտորոշման) լաբորատորիաներ, ինչպես նաև տարբեր ենթակայության այլ պրոֆիլային լաբորատորիաներ, հսկողություն իրականացնող բժշկական կազմակերպություններ՝ սպառողների իրավունքների և մարդու բարեկեցության ոլորտում (այդ թվում հիգիենայի և համաճարակաբանության, ախտահանման կենտրոնները և կայանները, սանթոդարանները), հավաստագրով մասնավոր բժշկական գործունեությամբ զբաղվող իրավաբանական և ֆիզիկական անձանց հիմնարկներն ու կազմակերպությունները, վարակի օջախներ, տեխնաժին և բնական արտակարգ իրավիճակների գոտիներ:

²Սոցիալ-մշակութային, սպասարկման ոլորտի, մարզա-առողջարարական նշանակության կազմակերպություններ (այդ թվում վարսավիրական և կոսմետոլոգիական ծառայություն մատուցող, մերսման սենյակ, ՍՊԱ-պահ, հյուրանոց, հանրակացարան, պանսիոնատ, հանգստյան տուն, թատրոն, կինոթատրոն, ակումբ, զվարճանքի կենտրոն, բաղնիք, շոգեբաղնիք, լվացատուն, քիմնաքրում, լողավազան, ակվապարկ, մարզահամալիր, ֆիթնես կենտրոն, զանգվածային սպորտային միջոցառումների անցկացման վայրեր, սոլյարի, հասարակական զուգարան), սոցիալական ծառայություն մատուցող հաստատություններ (այդ թվում տարեցների, հաշմանդամների, մանկան, գիշերային կեցության տներ, ինտերնատ, անչափահասների սոցիալ-վերականգնողական կենտրոն, ապաստան), քրեակատարողական հիմնարկներ, արդարադատության մարմիններ և հիմնարկներ, ռազմական կազմակերպություններ, այդ թվում ուժային գերատեսչությունների, ԱԻՆ, ԱԱԾ, ՆԳՆ ենթակառուցվածքներ, զինված ուժերի և ոստիկանական զորքերի զորամասեր և հաստատություններ, կրթական հաստատություններ (այդ թվում նախադպրոցական), մարզադպրոցներ, ադմինիստրատիվ և գրասենյակային հաստատություններ, ֆինանսավարկային կազմակերպություններ, այդ թվում բանկ, տրանսպորտի օբյեկտներ (այդ թվում հասարակական, երկաթուղային, ցամաքային, ջրային, մետրոպոլիտենի, սննդամթերքի տեղափոխման, բեռնատար), օդանավակայան, կայարան, հանրային սննդի և առևտրի օբյեկտներ, սննդի արտադրություններ, արդյունաբերական և մթերային շուկաներ, պահեստներ և պահոցներ, դեղագործական և դեղատնային կազմակերպություններ, քիմիա-դեղագործական և կենսատեխնոլոգիական արդյունաբերության, օժանելիք-կոսմետիկական հիմնարկներ, իմունակենսաբանական պատրաստուկների իրացմամբ զբաղվող կազմակերպություններ, բուսաբուծությամբ զբաղվող հիմնարկներ ու կազմակերպություններ (տնկարան), թոչնաբուժական ու կենդանաբուժական տնտեսություններ, անասնաբուժարաններ, անասնաբուժական հսկողության այլ օբյեկտներ:

հիվանդին զննելուց հետո ձեռքերը լվանալու հնարավորություն չկա), ինվազիվ գործողություններ, փոքր վիրաբուժական միջամտություններ իրականացնելուց, վերքի կամ կաթետերի խնամքից առաջ և հետո, սննդային հումքի և սննդամթերքի հետ շփումից առաջ և հետո դրանց արտադրության և մշակման ժամանակ, թղթադրամների և մետաղադրամների հետ շփման ժամանակ, տարբեր հասարակական վայրեր այցելելու ժամանակ և հետո տարբեր շփումային մակերեսների հետ շփման ժամանակ, ցանկացած այլ իրավիճակներում, այդ թվում, երբ հնարավոր չէ լվացվել օճառով:

2) Բժշկական կազմակերպություններում վիրաբույժների և վիրաբուժական միջամտությունների, լուրջ ինվազիվ միջամտությունների, ծննդաբերության, մագիստրալ անոթների կաթետերավորման իրականացմանը մասնակցող բոլոր անձանց ձեռքերի մշակման համար,

3) Բժշկական կազմակերպություններում դոնորների արմնկային ծայքի մշակման համար,

4) Բժշկական կազմակերպությունում վիրաբուժական միջամտությունից և մաշկի ամբողջականության խախտմամբ այլ գործողություններից (պունկցիա, բիոպսիա) առաջ պացիենտների վիրահատական դաշտի մաշկի մշակման համար,

5) Բժշկական կազմակերպություններում, հաստատություններում, հիմնարկներում և օբյեկտներում^{1,2}, բնակչության կողմից՝ կենցաղում, ենթամաշկային, միջմկանային, ներերակային ներարկումներ իրականացնելուց կամ արյուն վերցնելուց առաջ պացիենտի ներարկային դաշտի մաշկի մշակման համար,

6) Կենցաղում ոտնաթաթի մշակման համար, այդ թվում 10 տարեկանից բարձր երեխաների և մեծահասակ բնակչության,

7) Բժշկական կազմակերպություններում, բնակչության կողմից կենցաղում պացիենտի խնամքի ժամանակ մաշկի մասնակի սանիտարական մշակման համար:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

7. Ձեռքերի հիգիենիկ մշակում. չոր ձեռքերի մեջ (առանց օճառով և ջրով նախապես լվացվելու) լցնել առնվազն 3 մլ միջոց և այն առնվազն 15 վայրկյան ներմերսել ձեռքերի ակերի մեջ, ուշադրություն դարձնելով մատների ծայրերի, եղունգների շուրջը և մատների միջև մշակմանը: Վիրուսային հիվանդությունների կանխարգելման համար

ձեռքերի հիգիենիկ մշակումն իրականացնում են ձեռքերի մաշկի մեջ առնվազն 3 մլ քանակությամբ միջոցի մեկանգամյա 1 րոպե ներմերսումով: Բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների տարածումը կանխելու համար ձեռքերի հիգիենիկ մշակումն իրականացնում են ձեռքերի մաշկի մեջ միջոցի մեկանգամյա ներմերսումով առնվազն 3 մլ՝ 30 վայրկյան: Տուբերկուլոզի կանխարգելման համար ձեռքերի հիգիենիկ մշակումն իրականացնում են ձեռքերի մաշկի մեջ միջոցի մեկանգամյա ներմերսումով՝ 3-5 մլ քանակությամբ՝ 1,5 րոպե տևողությամբ:

8. Վիրաբույժների ձեռքերի մշակումն իրականացվում է 2 փուլով.

1) 1-ին փուլ – ձեռքերի մեխանիկական մաքրում հաջորդող չորացումով. ձեռքի դաստակները, նախադաստակները և նախաբազուկները մանրակրկիտ լվանում են ջրով և օճառով (հեղուկ կամ պինդ) pH-ի չեզոք մակարդակով առնվազն 2 րոպե, չորացնում են մանրէազերծ թանգիվե անձեռոցիկով կամ սրբիչով,

2) 2-րդ փուլ – ձեռքերի կրկնակի ախտահանում մաշկային հականեխիչով. մեխանիկական մաքրման փուլից հետո ձեռքերի ակերի վրա լցնում են 3-5-ական մլ բաժիններով միջոց և, չթողնելով չորանա, ներմերսում են ձեռքերի, դաստակների, նախաբազուկների մաշկին՝ խիստ պահպանելով շարժումների հաջորդականությունը: Մաշկային հականեխիչը ձեռքերի վրա լցնում են երկու անգամ, հականեխիչի ընդհանուր ծախսը՝ 6-10 մլ, գործողության ընդհանուր ժամանակը՝ 3 րոպե: Մանրէազերծ ձեռնոցները հագնում են ձեռքերին միջոցի ամբողջությամբ չորանալուց հետո: Ձեռքերի առավել արդյունավետ հիգիենիկ և վիրաբուժական հականեխման համար, հատկապես բուժանձնակազմի, առաջարկվում է օգտագործել ձեռքերի մշակման EN-1500 եվրոպական ստանդարտում ներկայացված ալգորիթմը:

9. Վիրահատական դաշտի մաշկի մշակում. մաշկը մշակում են կրկնակի՝ միջոցով առատ թրջված առանձին մանրէազերծ թանգիվե խճուճներով կամ անձեռոցիկներով: Չվնասված մաշկի մշակման համար մաշկային հականեխիչը քսում են շրջանաձև՝ կենտրոնից ծայրամաս, թարախային վերքի առկայության ժամանակ՝ ծայրամասից կենտրոն: Երկրորդ մշակումից հետո պահաժամը 1 րոպե է: Վիրաբուժական միջամտության նախորդ օրը իրականացնում են պացիենտի մաշկի ամբողջական կամ մասնակի սանիտարական մշակում դրա համար թույլատրված ցանկացած միջոցով:

10. Դոնորների արմնկային ծալքի մշակում. արմնկային ծալքի մաշկը կրկնակի շփում

են միջոցով առատ թրջված առանձին մանրէագերծ թանգիվե խծուծներով կամ անձեռոցիկներով և թողնում 1 րոպե:

11. Ներարկային դաշտի մշակում. մաշկը շփում են միջոցով առատ թրջված մանրէագերծ բամբակյա խծուծով: Մշակումից հետո պահաժամը 1 րոպե է:

12. Ոտնաթաթերի մշակումն իրականացվում է երկու եղանակներից որևէ մեկով.

1) Միջոցով առատ թրջված անձեռոցիկով (խծուծով) մանրակրկիտ շփում են ոտնաթաթերի մաշկը: Յուրաքանչյուր ոտնաթաթի համար օգտագործում են իր անձեռոցիկը (խծուծը): Մշակումից հետո պահաժամը 30 վայրկյան է,

2) Ոտնաթաթերի մաշկը ոռոգում են մինչև ամբողջությամբ խոնավանա: Պահում են 30 վայրկյան:

13. Մաշկի սանիտարական մշակում (մասնակի). մաշկի աղտոտված հատվածը շփում են միջոցով առատ թրջված անձեռոցիկով և պահում մինչև ամբողջությամբ չորանալը:

3. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

14. Միջոցով աշխատել չի թույլատրվում ալերգիկ հիվանդություններ ունեցող, քիմիական նյութերի նկատմամբ զգայուն անձանց, երեխաներին:

15. Միջոցն օգտագործել միայն ըստ նշանակության:

16. Միջոցը չօգտագործել պիտանելիության ժամկետի սպառվելուց հետո:

17. Միջոցով չմշակել վերքերը և լորձաթաղանթները: Օգտագործել միայն արտաքին կիրառության համար:

18. Չլցնել քիմիական նյութերի նկատմամբ բարձր զգայունություն ունեցող անձանց մաշկի վրա: Մինչև 10 տարեկան երեխաների ձեռքերի մաշկի ախտահանումն իրականացնել մաշկի սանիտարական մշակման ռեժիմով (առանց ներմերսման):

19. Միջոցը դյուրավառ հեղուկ է, հրդեհավտանգ: Կիրառելու ժամանակ չծխել, միջոցը չօգտագործել ջերմության աղբյուրի և կրակի մոտ:

20. Միջոցը պահել սերտ փակ փաթեթավորմամբ, բաց կրակից և տաքացուցիչ սարքերից հեռու, դեղերից և սննդամթերքից առանձին, երեխաների և կենդանիների համար անհասանելի տեղերում:

21. Նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում կարող են առաջանալ սուր թունավորման երևույթներ, որոնք բնորոշվում են քնկոտության և

գլխապտույտի, հոգնածության, շնչառական օրգանների, աչքերի, մաշկի գրգռվածության նշաններով:

4. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

22. Միջոցն աչքերի մեջ լցվելու դեպքում անմիջապես դրանք լվանալ ջրի շիթով 10-15 րոպե և կաթացնել նատրիումի սուլֆացիլի 30%-ոց լուծույթ: Դիմել ակնաբույժի:

23. Բերանի մեջ միջոցի պատահական լցվելու դեպքում անմիջապես ողողել այն մեծ քանակությամբ ջրով: Պատահական կուլ տալու ժամանակ խմել մի քանի բաժակ ջուր և փսխում առաջացնել: Այնուհետև խմել ակտիվացված ածուխ (1 հաբ ածուխ տուժածի յուրաքանչյուր 10 կգ քաշին հաշվարկով):

24. Շնչառական օրգանների (քոր կոկորդում, քթի մեջ, հազ, դժվարացած շնչառություն, հեղձուկ) կամ աչքերի (ծակծկոց, արցունքահոսություն) գրգռման ժամանակ դադարեցնել աշխատանքը միջոցով և դուրս գալ մաքուր օդի կամ լավ օդափոխվող սենք: Բերանը և քիթը մաքանը ողողել ջրով, խմել կաթ: Դիմել բժշկի:

5. ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

25. Միջոցի տեղափոխում թույլատրվում է $+30^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր ջերմաստիճանում, տրանսպորտի բոլոր տեսակներով, տրանսպորտի կոնկրետ տեսակի համար գործող և միջոցի ու տարայի անվնասությունը երաշխավորող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան: Միջոցը զգայուն չէ ցածր ջերմաստիճանների նկատմամբ (չի սառչում):

26. Միջոցը պահվում է արտադրողի փակ բնօրինակ փաթեթավորմամբ ծածկ ունեցող, չոր, օդափոխվող սենքերում, տաքացուցիչ սարքերից առնվազն 1 մ հեռավորությամբ, խոնավությունից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, $+30^{\circ}\text{C}$ -ից ոչ բարձր ջերմաստիճանում:

27. Վթարային իրավիճակում միջոցի թափվելու ժամանակ օգտագործել պաշտպանիչ հագուստ, ճտքակոշիկ և անհատական պաշտպանության միջոցներ՝ շնչառական օրգանների համար՝ հակագազային շնչադիմակներ РПГ-67 կամ РУ-60М տեսակի «А» մականիշի պատրոնով, աչքերի համար՝ հերմետիկ ակնոց, ձեռքերի մաշկի համար՝ ռետինե ձեռնոց:

28. Թափված միջոցի հավաքման ժամանակ այն ադսորբում են հեղուկը պահող ոչ

դյուրավառ նյութերով (սիլիկագել, ավագ), հավաքում և ուղարկում օգտահանման: Մնացորդները լվանում են մեծ քանակությամբ ջրով: Կոյուղու մեջ պատրաստուկը թույլատրվում է լցնել միայն առնվազն 4 անգամ նոսրացված վիճակում:

29. Շրջակա միջավայրի պաշտպանության միջոցառումներ. չնոսրացված միջոցը չլցնել մակերեսային կամ ստորգետնյա ջրերի և կոյուղու մեջ:

6. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

6.1. Ըստ որակի ցուցանիշների, միջոցը համապատասխանում է TY 20.20.14-038-46842767-2019 պահանջներին, սույն հրահանգի աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշներին և նորմաներին:

Աղյուսակ 1

Միջոցի որակի գնահատման նորմատիվ ցուցանիշներ

№	Նորմատիվ ցուցանիշներ	Նորմա
1	Արտաքին տեսք, գույն, հոտ	Թափանցիկ, համասեռ, ներկված կամ չներկված հեղուկ սպիրտի և/կամ բուրանյութի յուրահատուկ հոտով
2	Միջոցի խտություն 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	0,855 ± 0,005
3	Իզոպրոպիլ սպիրտի զանգվածային բաժին, %	70,0 ± 2,0
4	Ունդեցիլամիդոպրոպիլ-տրիմոնիում մետոսուլֆատի զանգվածային բաժին, %	0,23 ± 0,03
5	Ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդի զանգվածային բաժին, %	0,10 ± 0,02
6	2-ֆենօքսիէթանոլի զանգվածային բաժին, %	0,30 ± 0,03

